**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«8» հունիսի 2026թ. N 84-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի մայիսի 29-ի N Ե/01/890-26 և հունիսի 1-ի N INS070-26, N INS069-26 գրությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի նոյեմբերի 6-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 194-Ա հրամանի հավելվածը լրացնել 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Հունիսի 29-հուլիսի 7 | Ուրբաթ օրերին ժամը 16:00-ից, շաբաթ օրերին ժամը 10:00-ից | «Ցածրավոլտ էլեկտրական սարքավորումները և նյութերը էլեկտրաէներգետիկայում» | Համբարյան Վարդան Կարապետի, էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի էլեկտրական մեքենաներ և ապարատնե | ՀԱՊՀ, 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, լսարան 10507 | 20 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 07-10 մասնագիտու | 120.000 դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ր ամբիոնի դոցենտ, Կուրղինյան Էդուարդ Վաղարշակի, Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի Էլեկտրական մեքենաներ և ապարատներ ամբիոնի դոցենտ | | | թյուններ | |

»;

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի օգոստոսի 21-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 129-Ա հրամանի հավելվածը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Հունիսի 16-17 | 16.30-21.30 | «ISO 14001 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց, քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները» վերապատրաստման դասընթաց | Բիյան Ծովինար | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 10 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34 մասնագիտություններ | 40.000 դրամ |

»;

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 9-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական

զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 101-Ա հրամանի հավելվածը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Հուլիսի 11 | 16.30-21.30 | «Աշխատանքի անվտանգությունը և առողջության պահպանումը շինհրապարակում» | Գեորգի Կակոյան, Հայկ Ստեփանյան | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Էրեբունի, Արցախի փող. 6/5 | 5 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 05,06,09,10,13,14,17,18,21,22,25,26,29,30,32 մասնագիտություններ | 20.000 ՀՀ դրամ |

»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին և «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սույն հրամանի մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6/8/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ